

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
վիճակագրության պետական խորհրդի նիստի

09.07.2018թ.

ժ. 11.00

Մասնակցում էին՝ Ս.Մնացականյան (խորհրդի նախագահ), Գ.Անանյան, Գ.Գևորգյան, Ս.Դավթյան, Ա.Սաֆյան, Լ.Պետրոսյան, Ն.Բաղդասարյան, (խորհրդի անդամներ), Հ. Գրիգորյան (խորհրդի քարտուղար)
Հրավիրված էին՝ Ա.Հայրապետյան (գլխավոր քարտուղար)

Օրակարգի նախագծում երկու հարց.

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

2. Այլ հարցեր

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որը հաստատվեց ամբողջությամբ և միաձայն:

/Բովեսարկության արդյունքները-կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

Լսեցին՝

1. «Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի թիվ 110-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» հարցը:

/Զեկուցող՝ Ա.Հայրապետյան/

Որոշեցին՝

Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի հուլիսի 26-ի «Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմ պետական կառավարչական հիմնարկ ստեղծելու, Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության կանոնադրությունը և աշխատակազմի կառուցվածքը հաստատելու մասին» թիվ 110-Ն որոշումը:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

/Նորմատիվ/

/Բովեսարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/

ՆԱԽԱԳԱՀ

Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ